ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2.138
ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-02/19

«03» 09 2019 թ.

ք.Երևան

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Գասպարյանի, որը
գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի
կողմից, և <<ԱՎԱԳ-ՇԻՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Ավագյանի, որը գործում է
ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից,
կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով,
նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝
պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված
<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ վարչական շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքները
(այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված
աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ
սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի
նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-
նախահաշվին համապատասխան:

1.3Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ
մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 29.11.2019թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների
կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային
գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:
2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և
սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և
որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ
օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի
կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով
նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված
դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին
չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների
անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի
6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն
պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը
կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը
(ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում
նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված
աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել
երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական
հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանա-գրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի

վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 4524000 (չորս միլիոն հինգ հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ, որից 754000 ( յոթ հարյուր հիսունչորս հազարը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումները իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[30] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է

անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած` կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Կապալառուի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ` բացառությամբ` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի` պարտավորությունների մասնակի չկատարման կամ

ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում` նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված` ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| «ՊԱՏՎԻՐԱՏՈՒ» | «ԿԱՊԱԼԱՌՈՒ» |
| --- | --- |
| <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ | <<ԱՎԱԳ-ՇԻՆ>>ՍՊԸ |
| Ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ | Կոտայքի մ. գ. Քաղսի 4 թղմ 88 |
| Ի.Գասպարյան 33 | Հ/Հ 247640206097000 |
| Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ | ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ |
| ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ | ՀՎՀՀ 03022928 |
| ՀՎՀՀ 01216144 | |
| Գլխավոր տնօրեն Ա.Գասպարյան | Տնօրեն Հ. Ավագյան |
| ---------------------------------------- | ---------------------------------------- |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված թիվ 1
« 03 » 09 2019 թ. կնքված
«ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-02/19» ծածկագրով 2.138 պայմանագրի

# ԾԱԽՍԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

## <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| Հ/Հ | Շիֆր, նորմա-տիվի համարը | Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը | Չափման միավորը | Քանակը | Աշխատավարձի միավորը / ընդհ. արժեքը ռուբ./հազար դրամ | Մեքեն. շահագործման միավորը / ընդհ. արժեքը ռուբ./հազար դրամ | Նյութերի արժեքը (հազար դրամ): Նյութերի անվանումը | Չափման միավորը | Քանակը միավորի համար | Նյութերի ընդհանուր ծախսը | Միավորի արժեքը հազար դրամ | Նյութերի միավորի արժեքը (Գտրանսպորտ) | Աշխատավարձի միավորի արժեքը հազար դրամ | Ընդհանուրի արժեքը միավորի համար հազար դրամ | Ընդհանուրի արժեքը հազար դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | E46-35 | Բազալտե երեսապատման քանդում | մ 2 | 8,00 | 0,09 / 0,16 | 0,002 / 0,01 | | | | | | | 0,16 | 0,16 | 1,29 |
| 2 | E46-78 | Երկաթբետոնե աստիճանավանդակի քանդում | մ 3 | 5,70 | 13,00 / 22,47 | 16,80 / 46,46 | | | | | | | 68,93 | 68,93 | 392,91 |
| 3 | E15-613 164-7 | փայտե դռան քանդում | մ 2 | 4,80 | 0,88 / 1,52 | 0,10 / 0,27 | | | | | | | 1,79 | 1,79 | 8,58 |
| 4 | 23-165 | Շին. աղբի բարձում ավտոինքնաթափեր | մ 3 | 6,00 | 0,40 / 0,69 | ——— | | | | | | | 0,69 | 0,69 | 4,15 |
| 5 | C310-13 | Տեղափոխում մինչև 13 կմ | տ | 12,60 | ——— | 0,90 / 2,49 | | | | | | | 2,49 | 2,49 | 31,36 |
| 6 | E6-5-4 1-5 | Երկաթբետոնե հիմքերի իրականացում B20 դասի բետոնից | մ 3 | 1,25 | 3,63 / 6,27 | 0,59 / 1,63 | | | | | | | 7,91 | 50,60 | 63,25 |
| | | | | | | | ծանր բետոն B20 դասի | մ 3 | 1,02 | 1,27 | 29,22 | 33,71 | 42,70 | | |
| | | | | | | | կաղապարում | մ 2 | 1,60 | 2,00 | 3,50 | 6,37 | | | |
| | | | | | | | տախտակներ | մ 3 | 0,02 | 0,02 | 127,78 | 2,61 | | | |
| 7 | շուկա | Ամրան A500c 12մմ | տ | 0,030 | ——— | ——— | | | | | | | | 355,507 | 10,67 |
| | | | | | | | Ամրան A500c 12մմ | տ | 1,00 | 0,03 | 312,7 | 355,5 | 355,5 | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ——— | ——— | | | | | 1 | 1 | 1 | | |
| 8 | E9-47 | Աստիճանների մետաղական կոնստրուկցիաների մոնտաժ | տ | 0,76<br>3 | 13,80 / 23,85 | 11,80 / 32,63 | | | | | | | 56,49 | 674,37 | 514,31 |
| | | | | | | | Աստիճանների մետաղական կոնստրուկցիաներ | տ | 1,00 | 0,76 | 528,3<br>9 | 600,7<br>1 | 617,8<br>8 | | |
| | | | | | | | էլեկտրոդներ | կգ | 2,4 | 1,83 | 0,96 | 2,61 | | | |
| | | | | | | | շին. Հեղյուս | կգ | 13,4 | 10,22 | 0,96 | 14,56 | | | |
| 9 | ի .տ. | Ալյումինե Դռներ 60 մմ հաստ 4+4 մմ ջերմակամրջակով Սպիտակ | մ 2 | 2,16 | ——— | ——— | Ալյումինե Դռներ 60 մմ հաստ 4+4 մմ ջերմակամրջակով Սպիտակ | մ 2 | 1,00 | 2,16 | 66,89 | 76,04 | 76,04 | 76,04 | 164,25 |
| 10 | շ ու կ<br>ա | Կոփված ապակուց 10 մմ հաստությամբ ապակիներով դռների իրականացում, փականով, ծխնիներով, բռակով միասին | մ 2 | 5,00 | ——— | ——— | Կոփված ապակուց 10 մմ հաստությամբ ապակիներով դռների իրականացում, փականով, ծխնիներով, բռակով միասին | մ 2 | 1,00 | 5,00 | 81,00 | 92,09 | 92,09 | 92,09 | 460,43 |
| 11 | շ ու կ<br>ա | Չժանգոտվող մետաղից ալյումինե դեկորատիվ ճաղաշար, իր բռնաձողով h-1200 մմ | մ | 4,40 | ——— | ——— | Չժանգոտվող մետաղից ալյումինե դեկորատիվ ճաղաշար, իր բռնաձողով h-1200 մմ | մ | 1,00 | 4,40 | 17,60 | 20,01 | 20,01 | 20,01 | 88,04 |
| | | **1-ԻՆ ՀԱՐԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐ** | | | | | | | | | | | | | |
| 12 | E27-36 | Բազալտե եզրաքարերի քանդում | մ | 11,1<br>0 | 0,44 / 0,76 | ——— | | | | | | | 0,76 | 0,76 | 8,44 |
| 13 | E27-33<br>9-4 | Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում 7.5մ2 | 100մ<br>3 | 0,02<br>0 | 82,60 / 142,7<br>8 | 78,40 / 216,8<br>1 | | | | | | | 359,6<br>0 | 359,60 | 7,25 |
| 14 | E15-<br>613 | Մետաղական ճաղավանդակի | մ 2 | 8,90 | 0,16 | | | | | | | | 0,28 | 0,28 | 2,46 |

| № | Code | Name | Unit | Qty | | | Material | Unit | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 164-7 | ճաղավանդակի մաքրում | | | 0,28 | | | | | | | | | | |
| 15 | E15-613 164-7 | Մետաղապլաստե դռան քանդում | մ2 | 2,16 | 0,88 / 1,52 | 0,10 / 0,27 | | | | | | | 1,79 | 1,79 | 3,86 |
| 16 | E15-613 164-7 | Մետաղական ճաղավանդակի ներկում 2 շերտ | 100մ2 | 0,089 | 21,40 / 36,99 | 0,03 / 0,08 | | | | | | | 37,08 | 68,11 | 6,06 |
| | | | | | | | ներկեր | կգ | 27,30 | 2,43 | 1,00 | 31,04 | 31,04 | | |
| 17 | E15-662 | պատերի լավորակ ներկում լատեկսային | 100մ2 | 0,45 | 13,80 / 23,85 | 0,80 / 2,21 | | | | | | | 26,07 | 106,36 | 48,29 |
| | | | | | | | մածիկ | կգ | 5,00 | 2,27 | 0,17 | 0,94 | 80,30 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 28,60 | 1,11 | 79,36 | | | |
| 18 | E15-664 168-7 | Աստիճանավանդակի կողքի և տակի լավորակ ներկում լատեկսային | 100մ2 | 0,194 | 39,70 / 68,63 | 1,00 / 2,77 | | | | | | | 71,39 | 165,57 | 32,14 |
| | | | | | | | մածիկ | կգ | 79,00 | 15,33 | 0,17 | 14,82 | 94,18 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 12,23 | 1,11 | 79,36 | | | |
| **2-ՐԴ ՀԱՐԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐ** | | | | | | | | | | | | | | | |
| 19 | E15-664 168-7 | Պատերի լավորակ ներկում լատեկսային | 100մ2 | 0,85 | 39,70 / 68,63 | 1,00 / 2,77 | | | | | | | 71,39 | 165,57 | 140,73 |
| | | | | | | | մածիկ | կգ | 79,00 | 67,15 | 0,17 | 14,82 | 94,18 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 53,55 | 1,11 | 79,36 | | | |
| 20 | E15-665 | Առաստաղի լավորակ ներկում լատեկսային | 100մ2 | 0,064 | 51,40 / 88,85 | 1,20 / 3,32 | | | | | | | 92,17 | 188,78 | 12,08 |
| | | | | | | | մածիկ | կգ | 92,00 | 5,89 | 0,17 | 17,26 | 96,62 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 4,03 | 1,11 | 79,36 | | | |
| 21 | E15-664 168-7 | Աստիճանավանդակի կողքի և տակի ներկում լատեկսային | 100մ2 | 0,194 | 39,70 / 68,63 | 1,00 / 2,77 | | | | | | | 71,39 | 165,57 | 32,12 |
| | | | | | | | մածիկ | կգ | 79,00 | 15,33 | 0,17 | 14,82 | 94,18 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,0 | 12,22 | 1,11 | 79,36 | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | 0 | | | | | | |
| **3-ՐԴ ՀԱՐԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐ** | | | | | | | | | | | | | | | |
| 22 | E15-662 168-7 | Պատերի ներկում լատեկսային | 100մ2 | 1,02 | 39,70 / 68,63 | 1,00 / 2,77 | | | | | | | 71,39 | 115,50 | 118,28 |
| | | | | | | | մածիկ | կգ | 79,00 | 80,90 | 0,17 | 14,82 | 44,11 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 64,51 | 0,41 | 29,29 | | | |
| 23 | E15-665 | Առաստաղի լավորակ ներկում լատեկսային | 100մ2 | 0,13 | 51,40 / 88,85 | 1,20 / 3,32 | | | | | | | 92,17 | 138,72 | 18,17 |
| | | | | | | | մածիկ | կգ | 92,00 | 12,05 | 0,17 | 17,26 | 46,55 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 8,25 | 0,41 | 29,29 | | | |
| 24 | E15-664 168-7 | Աստիճանավանդակի կողքի և տակի լավորակ ներկում լատեկսային | 100մ2 | 0,194 | 39,70 / 68,63 | 1,00 / 2,77 | | | | | | | 71,39 | 115,50 | 22,41 |
| | | | | | | | մածիկ | կգ | 79,00 | 15,33 | 0,17 | 14,82 | 44,11 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 12,22 | 0,41 | 29,29 | | | |
| **4-ՐԴ ՀԱՐԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐ** | | | | | | | | | | | | | | | |
| 25 | E15-664 168-7 | Պատերի ներկում լատեկսային | 100մ2 | 1,35 | 39,70 / 68,63 | 1,00 / 2,77 | | | | | | | 71,39 | 101,62 | 136,99 |
| | | | | | | | մածիկ | կգ | 5,00 | 6,74 | 0,17 | 0,94 | 30,23 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 84,92 | 0,41 | 29,29 | | | |
| 26 | E15-665 | Առաստաղի ներկում լատեկսային | 100մ2 | 0,241 | 51,40 / 88,85 | 1,20 / 3,32 | | | | | | | 92,17 | 138,72 | 33,43 |
| | | | | | | | մածիկ | կգ | 92,00 | 22,17 | 0,17 | 17,26 | 46,55 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 15,18 | 0,41 | 29,29 | | | |
| 27 | E15-664 168-7 | Աստիճանավանդակի կողքի և տակի ներկում լատեկսային | 100մ2 | 0,194 | 39,70 / 68,63 | 1,00 / 2,77 | | | | | | | 71,39 | 115,50 | 22,41 |
| | | | | | | | մածիկ | կգ | 79,00 | 15,33 | 0,17 | 14,82 | 44,11 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,0 | 12,22 | 0,41 | 29,29 | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | 0 | | | | | | |
| 5-ՐԴ ՀԱՐԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐ | | | | | | | | | | | | | | | |
| 28 | E15-664 168-7 | Պատերի ներկում լատեկսային | 100մ2 | 1,35 | 39,70 / 68,63 | 1,00 / 2,77 | | | | | | | 71,39 | 115,50 | 155,70 |
| | | | | | | | մածիկ | կգ | 79,00 | 106,49 | 0,17 | 14,82 | 44,11 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 84,92 | 0,41 | 29,29 | | | |
| 29 | E15-664 168-7 | Աստիճանավանդակի կողքի և տակի ներկում լատեկսային | 100մ2 | 0,194 | 39,70 / 68,63 | 1,00 / 2,77 | | | | | | | 71,39 | 115,50 | 22,41 |
| | | | | | | | մածիկ | կգ | 79,00 | 15,33 | 0,17 | 14,82 | 44,11 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 12,22 | 0,41 | 29,29 | | | |
| 6-ՐԴ ՀԱՐԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐ | | | | | | | | | | | | | | | |
| 30 | E15-664 | Պատերի լավորակ ներկում լատեկսային | 100մ2 | 1,19 | 39,70 / 68,63 | 1,00 / 2,77 | | | | | | | 71,39 | 115,50 | 136,99 |
| | | | | | | | մածիկ | կգ | 79,00 | 93,69 | 0,17 | 14,82 | 44,11 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 74,72 | 0,41 | 29,29 | | | |
| 31 | E15-665 | Առաստաղի ներկում լատեկսային | 100մ2 | 0,24 | 51,40 / 88,85 | 1,20 / 3,32 | | | | | | | 92,17 | 138,72 | 33,43 |
| | | | | | | | մածիկ | կգ | 92,00 | 22,17 | 0,17 | 17,26 | 46,55 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 15,18 | 0,41 | 29,29 | | | |
| 32 | E15-664 168-7 | Աստիճանավանդակի կողքի և տակի լավորակ ներկում լատեկսային | 100մ2 | 0,194 | 39,70 / 68,63 | 1,00 / 2,77 | | | | | | | 71,39 | 115,50 | 22,41 |
| | | | | | | | մածիկ | կգ | 79,00 | 15,33 | 0,17 | 14,82 | 44,11 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 12,22 | 0,41 | 29,29 | | | |
| 7-ՐԴ ՀԱՐԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐ | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 33 | E15-664 | Պատերի լավորակ ներկում լատեկսային | 100մ2 | 0,076 | 39,70 / 68,63 | 1,00 / 2,77 | | | | | | | 71,39 | 115,50 | 8,78 |
| | | | | | | | մածիկ | կգ | 79,00 | 6,00 | 0,17 | 14,82 | 44,11 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 4,79 | 0,41 | 29,29 | | | |
| 34 | E15-665 | Առաստաղի ներկում լատեկսային | 100մ2 | 0,15 | 51,40 / 88,85 | 1,20 / 3,32 | | | | | | | 92,17 | 138,72 | 20,39 |
| | | | | | | | մածիկ | կգ | 92,00 | 13,52 | 0,17 | 17,26 | 46,55 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 9,26 | 0,41 | 29,29 | | | |
| 35 | E15-664 168-7 | Աստիճանավանդակի կողքի և տակի լավորակ ներկում լատեկսային | 100մ2 | 0,144 | 39,70 / 68,63 | 1,00 / 2,77 | | | | | | | 71,39 | 115,50 | 16,63 |
| | | | | | | | մածիկ | կգ | 79,00 | 11,38 | 0,17 | 14,82 | 44,11 | | |
| | | | | | | | ներկ լատեկսային | կգ | 63,00 | 9,07 | 0,41 | 29,29 | | | |
| 33 | E15-613 164-7 | Մետաղական ցանցի ներկում | 100մ2 | 0,452 | 21,40 / 36,99 | 0,03 / 0,08 | | | | | | | 37,08 | 68,11 | 30,79 |
| | | | | | | | ներկեր | կգ | 27,30 | 12,34 | 1,00 | 31,04 | 31,04 | | |
| 34 | E13-263 33-7 | Մետաղան ճաղավանդակի մաքրում | մ2 | 18,20 | 0,16 / 0,28 | ——— | | | | | | | 0,28 | 0,28 | 5,03 |
| 35 | E15-613 164-7 | Մետաղական ճաղավանդակի ներկում նախապես ներկումով | 100մ2 | 0,183 | 21,40 / 36,99 | 0,03 / 0,08 | | | | | | | 37,08 | 68,11 | 12,44 |
| | | | | | | | ներկեր | կգ | 27,30 | 4,98 | 1,00 | 31,04 | 31,04 | | |
| 35 | E13-263 33-7 | Մետաղան աստիճանավանդակի մաքրում | մ2 | 2,60 | 0,16 / 0,28 | ——— | | | | | | | 0,28 | 0,28 | 0,72 |
| 36 | E15-613 164-7 | Մետաղական աստիճանավանդակի ներկում | 100մ2 | 0,209 | 21,40 / 36,99 | 0,03 / 0,08 | | | | | | | 37,08 | 68,11 | 14,21 |
| | | | | | | | ներկեր | կգ | 27,30 | 5,69 | 1,00 | 31,04 | 31,04 | | |
| | | **Ջեռուցում** | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 37 | E18-112 5-1 | Ջեռուցման նոր մարտկոցների տեղադրում /540 սեկ./ | էկմ | 13,02 | 0,25 / 0,43 | 0,06 / 0,17 | | | | | | 0,60 | 0,60 | 7,79 |
| 38 | ի .տ. | Մարտկոց ալյումինե H=500մմ | սեկ | 42,00 | ——— | ——— | Մարտկոց ալյումինե H=500մմ | սեկ | 1,00 | 42,00 | 4,08 | 4,64 | 4,64 | 4,64 | 194,86 |

## Ամփոփ նախահաշիվ

| դդ h/h | Նախահաշվի համարը | Գլխի, օբյեկտի, աշխատանքի և ծախսերի անվանումը | Նախահաշվի արժեքը, հազար դրամ | | | | Նախահաշվի ընդհանուր հազար դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | շինարարական աշխատանքներ | մոնտաժային աշխատանքներ | սարքավորանք, հարմարանք-ներ | այլ ծախսեր | |
| | | Գլուխ II | | | | | |
| | Շինարարության հիմնական օբյեկտներ | | | | | | |
| 1 | Տեղ. նախ. N 2-1 | Շինարարական աշխատանքներ | 3857,06 | | | | 3857,06 |
| | | **Ընդամենը գլուխ II** | **3857,06** | | | | **3857,06** |
| | | Գլուխ VIII | | | | | |
| | ժամանակավոր շենքեր և շինություններ | | | | | | |
| 2 | 0,48% | ժամանակավոր շենքեր և շինություններ | 18,5 | | | | 18,5 |
| | | **Ընդամենը գլուխ VIII** | **18,5** | | | | **18,5** |
| | | **Ընդամենը I-VIII գլուխ** | **3875,57** | | | | **3875,57** |
| | | Գլուխ IX | | | | | |
| | | Այլ աշխատանքներ և ծախսեր | | | | | |
| 3 | 0,80% | Աշխատանքների կատարում ձմեռային պայմաններում | 31,00 | | | | 31,00 |
| 4 | 2,00% | Փոքր ծավալի շինմոնտաժային աշխատանքների համար | | | | 77,51 | 77,51 |
| 5 | 0,15% | Շին. աղբի տեղափոխման ծախսեր | | | | 5,81 | 5,81 |
| | | **Ընդամենը գլուխ IX** | **31,00** | | | **83,32** | **114,33** |
| | | **Ընդամենը I-IX գլուխ** | **3906,58** | | | **83,32** | **3989,90** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գլուխ X | | | | | |
| | Հեղինակային և տեխնիկական հսկողություն | | | | | | |
| 6 | Սահմանված նորմ 0,6% | Հեղինակային հսկողություն | | | | | |
| 7 | 2% | Տեխնիկական հսկողություն | | | | 23,94 | 23,94 |
| | | Ընդամենը գլուխ X | | | | 79,80 | 79,80 |
| | | Ընդամենը I-X գլուխ | 3906,58 | | | 103,7 | 103,7 |
| 8 | Սահմանված նորմ 3% | Չնախատեսված ծախսեր | 117,20 | | | 187,06 | 4093,64 |
| | | | | | | | 117,20 |
| . | | ԸՆԴԱՄԵՆԸ՝ ըստ հավաք նախահաշվի | 4023,77 | | | 187,06 | 4210,84 |
| 9 | | ԱԱՀ 20% | 804,75 | | | | |
| 10 | | ԱՄԲՈՂՋԸ՝ ըստ հավաք նախահաշվի | 4828,53 | | | 37,41 | 842,17 |
| | | Ընդամենը | | | | 224,47 | 5053,00 |
| 11 | | Այդ թվում վերադարձվող գումարը | | | | | 5053,00 |
| | | | | | | | 2,78 |

Վերանորոգման աշխատանքները կատարվելու են վերահսկվող տարածքում և վերանորոգման աշխատանքներն իրականացնող անձնակազմը պետք է ենթարկվի ռեժիմային գոտում գործող կարգ ու կանոններին մինչև սույն աշխատանքների ավարտը: Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան Ի. Գասպարյան 33, <<Զվարթնոց>> ՕԿ:

| «ՊԱՏՎԻՐԱՏՈՒ» | «ԿԱՊԱԼԱՌՈՒ» |
|---|---|
| <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ | <<ԱՎԱԳ-ՇԻՆ>>ՍՊԸ |
| ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ | Կոտայքի մ. գ. Քաղսի 4 թղմ 88 |
| Ի.Գասպարյան 33 | Հ/Հ 2476402060970000 |
| Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ | ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ |
| ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ | ՀՎՀՀ 03022928 |
| ՀՎՀՀ 01216144 | |
| Գլխավոր տնօրեն Ա.Գասպարյան | Տնօրեն Հ. Ավագյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

*Հավելված թիվ 2*
« 03 » 09. 2019 թ. *կնքված*
«ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-02/19» *ծածկագրով* 2,138 *պայմանագրի*

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
### Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Տարածքի նախապատրաստում | Պայմանագրի կնքման օր | 13.09.2019 |
| 2 | Քանդման աշխատանքներ | 13.09.2019 | 30.09. 2019 |
| 3 | Հարդարման աշխատանքներ | 30.09.2019 | 31.10.2019 |
| 4 | Մետաղական աստիճանավանդակի կառուցում | 31.10.2019 | 20.11.2019 |
| 5 | Օբյեկտի հանձնում | 20.11.2019 | 29.11.2019 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | Պայմանագրի կնքման օր | 29.11.2019 թ. |

**«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»**

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն
Ա.Գասպարյան
------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**«ԿԱՊԱԼԱՌՈՒ»**

<<ԱՎԱԳ-ՇԻՆ>>ՍՊԸ
Կոտայքի մ. գ. Քաղսի 4 թղմ 88
Հ/Հ 2476402060970000
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
ՀՎՀՀ 03022928

Տնօրեն
Հ. Ավագյան
------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

« 03 » 09
«ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-02/19»

Հավելված թիվ 3
2019 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում | | | | |
| | | | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45461100/1 | <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ վարչական շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ | | | | 4524000 | 4524000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»**

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ОԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր
տնօրեն
Ա.Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ

**«ԿԱՊԱԼԱՌՈՒ»**

<<ԱՎԱԳ-ՇԻՆ>>ՍՊԸ
Կոտայքի մ. գ. Քաղսի 4 թղմ 88
Հ/Հ 2476402060970000
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
ՀՎՀՀ 03022928

Տնօրեն
Հ. Ավագյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
03 » 09 2019 թ. կնքված
«ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-02/19» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
_______________ -
_______________ -
գտնվելու վայրը _______ _
հհ _______ _
հվհհ _______ _

Պատվիրատու
_______________
_______________
գտնվելու վայրը _______
հհ_______
հվհհ_______

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_______________________________________________
_______________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 4.1
» 2019 թ. կնքված
«ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-02/19» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ _______________-ի

Կապալառուի անունը Պատվիրատուի անունը

(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _______________________-ին կնքված N _____ ______

պայմանագրի համարը պայմանագրի կնքման ամսաթիվը

գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________

ազգանուն, անուն

______________________________

ստորագրություն

**Ընդունեց**

______________________________

ազգանուն, անուն

______________________________

ստորագրություն